

ՀԱՍՄԻԿ ՂԱՄԲԱՐՅԱՆ

Կառավարում, բակալավրիատ, 4-րդ կուրս

ԱԶԳԱՅԻՆ ԱՐԺՈՒՅԹԻ ՓՈԽԱՐԺԵՔԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ
ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ՆԵՐՈՒԺԻ ՎՐԱ

Հիմնաբառեր. ազգային արժույթի փոխարժեք, արտահանման ներուժ, արժույթի կարգավորման քաղաքականություն, տնտեսական ներուժ

Արտարժույթի ազդեցությունը երկրի արտահանման ներուժի վրա մշտապես տնտեսագետների ուշադրության կենտրոնում է և մի շարք գիտական հետազոտությունների ու քննարկումների առանցքում: Սույն հետազոտությունում վերլուծվել է Հայաստանի Հանրապետության ազգային արժույթի (դրամի) փոխարժեքի ազդեցությունը ՀՀ արտահանման ներուժի վրա, պարզվել է, թե որ ապրանքախմբերի արտահանման ծավալներն են հիմնականում փոփոխության ենթարկվել ՀՀ դրամի գերարժևորման արդյունքում, ինչպես նաև իրավիճակը կայունացնելու համար քննարկվել է արժույթի կարգավորման քաղաքականության ընտրությունը ՀՀ կենտրոնական բանկի կողմից:

Ներածություն: Հայաստանի Հանրապետության տնտեսությունը վերջին ցնցումներին դիմակայել է՝ հիմնականում շնորհիվ խելամիտ մակրոտնտեսական կառավարման՝ ճկուն փոխարժեքի, գնաճի թիրախավորման ակտիվ ռեժիմի, արդյունավետ հարկաբյուջետային կանոնների և առողջ ֆինանսական հատվածի: Թեև 2022 թ. տնտեսությունն ավելի լավ է գործել, քան ավելի վաղ ակնկալվում էր, աշխարհաքաղաքական մարտահրավերները շարունակում են ազդել ՀՀ միջնաժամկետ աճի հեռանկարների վրա¹:

Մակրոտնտեսական կարգավորման ամենակարևոր ձեռքբերումը երկարաժամկետ կայուն տնտեսական աճն է: Այնուամենայնիվ, զարգացող երկրները հաճախ նախընտրում են թիրախավորել կարճաժամկետ խնդիրները՝ ի հաշիվ երկարաժամկետ արդյունքների, ինչը սովորաբար վնասում է երկրի կենսամակարդակին և կյանքի որակին: Միևնույն ժամանակ, մակրոտնտեսական կարգավորման մեխանիզմները ենթադրում են տնտեսական զարգացման երկարաժամկետ ռազմավարություն, այդ թվում՝ դրամավարկային քաղաքականության ոլորտում: Այս տեսանկյունից արժութային կարգավորման քաղաքականությունը կարևոր դեր է խաղում տնտեսական աճի կայուն տեմպերի ապահովման գործում:

Չարգացող երկրներում, որոնցից մեկը Հայաստանի Հանրապետությունն է, ազգային արժույթների փոխարժեքները հակված են գերարժևորման, ինչը բացասաբար է անդրադառնում արտահանվող ապրանքների վրա՝ նվազեցնելով արտադրողների իրական գները: Հետազոտության հիմնական վարկածն այն է, որ վերջին տարիների ընթացքում, հատկապես՝ 2022 թ., արտարժութային փոփոխությունները դրական են ազդել արտահանման ներուժի վրա:

¹ St' u The World Bank: The World Bank in Armenia, 2022, <https://www.worldbank.org/en/country/armenia/overview>

Գրականության ակնարկ: Մ. Ֆելդշտեյնը պնդում էր, որ փոխարժեքի ճկուն ռեժիմն արտաքին առևտրի համար ավելի ցանկալի է, քան ֆիքսվածը¹: Համանման կերպով, ըստ Դ. Ռոդրիկի² և Ս. Բհալայի³, գերազնահատված փոխարժեքը կարող է խոչընդոտել արտահանմանը, դրանով իսկ տնտեսական աճին, երբ թերազնահատված ազգային արժույթը կարող է խթանել առևտրային հատվածը: Հիրավի, հիմնականում բոլոր տնտեսապես զարգացած երկրները ունեն փոխարժեքի ճկուն ռեժիմ:

Ջոն Մեյնարդ Բեյնսն ասել է. «Փոխարժեքը կարևորագույն գործոններից մեկն է, որը որոշում է երկրի արտահանման և ներմուծման մակարդակը և ներդրումների ծավալը, որը կարող է ձեռնարկվել»: Քեյնսը կարծում էր, որ արտաքին առևտրաշրջանառության ցուցանիշները հիմնականում կախված են արտարժույթային տատանումներից: Սա այն կարևոր կետերից է, որին հետազոտության ընթացքում անդրադառնալու ենք: Ջոն Բեյնզիին, իր հերթին, անդրադարձել է տնտեսական ակտիվության կայունացմանը և ասել. «Ազգի փոխարժեքը տնտեսական քաղաքականության կենսական գործիք է և օգնում է որոշել տնտեսական ակտիվության մակարդակը և նրա քաղաքացիների կենսամակարդակը»:

Հիմնվելով մի քանի երկրների էմպիրիկ վերլուծության վրա՝ Դ. Ռոդրիկը հաստատում է, որ մրցակցային և թերազնահատված փոխարժեքներն ավելի հավանական է, որ նպաստեն արտահանման աճին և տարբերակմանը, քան գերազնահատվածները: Բ. Բալասսան պնդում է, որ ազգային արժույթի արժեզրկումը համարժեք է ներմուծման մաքսատուրքերի և արտահանման սուբսիդիաների միաժամանակյա կիրառմանը միևնույն դրույքաչափերով⁴: Հետևաբար, անցումը ազատ առևտրին և արժույթի համաժամանակյա արժեզրկումը կարող են դիտվել որպես գործող երաշխիքների փոխարինում միասնական մաքսատուրքով և սուբսիդավորմամբ, ինչը առևտրային հաշվեկշիռն անփոփոխ կպահի: Է. Սանդոյանը, Մ. Ոսկանյանը, Ա. Գալստյանը նշում են, որ Հայաստանի Հանրապետության տնտեսության կայուն զարգացումը ինչպես արտաքին, այնպես էլ ներքին շուկաներում աճող մրցակցության պայմաններում հնարավոր է միայն ազգային տնտեսության և նրա սուբյեկտների մրցունակության արմատական բարձրացման դեպքում: Այն ցույց է տալիս, որ լողացող փոխարժեքի և արտահանման վրա հիմնված մոդելի ներդրումը կարող է արագացնել Հայաստանի Հանրապետության տնտեսական աճը⁵: Հարցի արդիականությունն ու գործնական նշանակությունը պահանջում են վերլուծել արժույթի կարգավորման դերը՝ ՀՀ տնտեսական շուկայում մրցունակ լինելու համար: Տնտեսագետ, Երևանի պետա-

¹ St' u Europe's Monetary Union: The case against EMU. The Economist. June 13, 1992. URL: <https://www.nber.org/feldstein/economistmf.pdf>.

² St' u Rodrik D., Growth strategies. NBER Working Paper. 2003, URL: <https://www.nber.org/papers/w10050.pdf>

³ St' u Bhal S., Economic development and the role of currency undervaluation. Cato Journal. 2008, էջ 313–340, URL: <https://pdfs.semanticscholar.org/1b82/3707855694a294fed7545a142caf8aedf92a.pdf>

⁴ St' u Balassa B., Incentive policies and export performance in sub-Saharan Africa. World Development. 1990, էջ 383–391:

⁵ St' u Sandoyan E., Voskanyan M., Galstyan A., Impact channels of currency regulation on economic growth: The case of Armenia. Journal Global Policy and Governance:

կան համալսարանի ֆինանսների և հաշվապահական հաշվառման ամբիոնի վարիչ Հայկ Մնացականյանի կարծիքով՝ ամերիկյան դոլարի նկատմամբ հայկական դրամի արժևորումը մի շարք առանցքային գործոնների արդյունք է: Մեկը ուկրաինական պատերազմի պատճառով նավթի գների կտրուկ աճն է: Երկրորդ առանցքային գործոնն այն է, որ ուկրաինական պատերազմից հետո Հայաստանից Ռուսաստան արտահանման գրեթե 30% գործարքները կատարվում են ռուբլով: Մնացականյանը ցուցակին ավելացնում է նաև այս տարի Հայաստան այցելած զբոսաշրջիկների զգալի թիվը:

Հաշվի առնելով բոլոր տեսաբան-հետազոտողների կարծիքներն ու աշխատությունները՝ կարելի է ասել, որ արտարժույթն ու արտահանումը սերտ կապված տնտեսական մեծություններ են, և մեկի ցուցանիշների փոփոխությունը հանգեցնում է մյուսի երկարաժամկետում փոփոխության:

Հետազոտության մեթոդաբանություն: Հետազոտության ընթացքում վերլուծվել են ՀՀ արտահանումն ու արտարժույթային փոփոխությունները, և թե որքանով է ազդել ՀՀ դրամի արժևորումը արտահանման ներուժի վրա: Արտարժույթային փոփոխությունների շարժընթացն ուսումնասիրելու համար օգտվել ենք Համաշխարհային բանկի, ԿԲ-ի կողմից հրապարակված տվյալներից, իսկ արտաքին առևտրաշրջանառության կառուցվածքն ուսումնասիրելու համար հիմք են հանդիսացել ՊԵԿ-ի, ՀՀ վիճակագրական կոմիտեի տվյալները: Հիմնականում հետազոտության իրականացման համար օգտագործվել են հետևյալ մեթոդները.

վիճակագրական մեթոդ. տվյալ մեթոդի միջոցով ուսումնասիրվել են արտահանման և ազգային արժույթի փոխարժեքի կառուցվածքը, վերջինիս փոփոխության ազդեցությունը արտահանման ներուժի վրա՝ ըստ տարիների և ապրանքախմբերի:

Համեմատական մեթոդ. ենթադրում է տարբեր ժամանակաշրջաններում ազգային արժույթի փոփոխության դեպքում տարբեր ապրանքախմբերի արտահանման նվազեցում կամ ընդլայնում:


Վերլուծական մեթոդ. այս մեթոդով ցույց է տրվել ազգային արժույթի փոփոխության և արտահանման ներուժի կապը, ինչպես ԵԱՏՄ անդամ երկրների շրջանակում, այնպես էլ՝ տարբեր ապրանքախմբերի տեսքով:

Վերլուծություն: ՀՀ կենտրոնական բանկը վարում է ազատ լողացող փոխարժեքի քաղաքականություն, ինչը համահունչ է ազատականացված կապիտալի հաշվի գործարքների և անկախ դրամավարկային քաղաքականության իրականացման սկզբունքներին: Կենտրոնական բանկի միջամտությունը արժույթային շուկային իրականացվում է՝ ելնելով դրամավարկային քաղաքականության նպատակներից: Շուկայում ձևավորված փոխարժեքների հիման վրա Կենտրոնական բանկը հրապարակում է արտարժույթի նկատմամբ հայկական դրամի՝ արժույթային շուկաներում ձևավորված միջին փոխարժեքները¹:

Փոխարժեքն էական ազդեցություն ունի արտահանման ծավալների և ներուժի վրա: Չնայած հայտարարված լողացող փոխարժեքի քաղաքականությանը՝ ԿԲ-ն, այնուամենայնիվ, դե ֆակտո իրականացնում է կառավարվող,

¹ St'u Money Market, «ՀՀ կենտրոնական բանկի արտարժույթային քաղաքականություն», <https://moneymarket.am/index.php?tid=3&language=Hay&id1=2&id2=2&id3=1&page=menuinfo>

երբեմն նույնիսկ ֆիքսված փոխարժեքի ռեժիմ: Հայկական դրամի փոխարժեքի վրա անմիջականորեն ազդող գործոններից կարելի է առանձնացնել շուկայական ուղիները, ինչպես նաև դրամավարկային իշխանությունների կողմից կիրառվող ոչ շուկայական մեխանիզմները: ՀՀ կենտրոնական բանկի կողմից փոխարժեքը կառավարելու երկու հիմնական գործիքներն են՝ ուղղակի ինտերվենցիաները արտարժույթի շուկայում և 2014 թ. դեկտեմբերին կրկնապատկված պարտադիր պահուստավորումը՝ հայկական դրամի արժեզրկումը կասեցնելու համար: Վերլուծությունն իրականացվել է երկու հիմնական դիտանկյունով՝ քննարկվել է արտահանում-փոխարժեք կապը տարբեր ասուն ապրանքախմբերի միջոցով և ԵԱՏՄ-ին անդամակցելու ազդեցությունը ՀՀ-ի արտահանման լանդշաֆտի վրա:



Գծապատկեր 1. Դոլար-դրամ փոխարժեքի տարանջամները՝ 2013-2023 թթ.

Գծապատկեր 1-ում ներկայացված են տարիների ընթացքում փոխարժեքի տատանումները, իսկ գծապատկեր 2-ում՝ արտաքին առևտրաշրջանառությունը ԱՄՆ դոլարով: Ակնհայտ է, որ այս երկու ցուցանիշները հակադարձ համեմատական են: 2022 թ. դրամի արժևորման արդյունքում ապրիլ ամսից արտահանման ծավալները թռիչքաձև աճ են գրանցել: Արդեն իսկ ապրիլին, մարտ ամսվա համեմատ, արտահանումը աճել է 22%-ով (228,6 մլն ԱՄՆ դոլարից հասնելով 296,0 մլն ԱՄՆ դոլարի²): Արտահանման առավելագույն արժեքը գրանցվել է հոկտեմբեր ամսին՝ շուրջ 641.1 մլն ԱՄՆ դոլար, որը պայմանավորված էր և՛ փոխարժեքի մատչելիությամբ, և՛ գյուղատնտեսական բերքի զանգվածային արտահանմամբ: Հաշվի առնելով այս երկու գծապատկերների ցուցանիշները՝ կարելի է ասել, որ ՀՀ դրամի արժևորումը դրական է ազդել արտահանման ներուժի վրա:


¹ Տե՛ս Google Finance: United States Dollar to Armenian Dram, <https://www.google.com/finance/quote/USD-AMD>

² Տե՛ս Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտե: Արտահանում, մլն ԱՄՆ դոլարով, 2023, <https://www.armstat.am/am/?nid=12&id=10003>



Գծապատկեր 2. ՀՀ արտահանման ծավալները, մլն ԱՄՆ դոլար¹

Դիտարկենք Հայաստանի Հանրապետության արտահանման կառուցվածքի շարժընթացը՝ ըստ ապրանքախմբերի: Գծապատկեր 3-ը լույս է սփռում այն փաստի վրա, որ մինչև 2022 թվականը Հայաստանի Հանրապետության արտահանման հիմնական հատվածը կենտրոնացած էր 3 ապրանքախմբերում՝ օգտակար հանածոներ, թանկարժեք քարեր, ակոհոլային և ոչ ակոհոլային խմիչքներ: 2013–2014 թվականներից ծխախոտի արտահանումը զգալիորեն աճել է. 2022 թ. այն արդեն կազմում էր ՀՀ-ի ընդհանուր արտահանման 10,2%-ը (249.79 մլն ԱՄՆ դոլար) և զբաղեցնում էր 4-րդ տեղը²:



Գծապատկեր 3. Հայաստանի արտահանման կառուցվածքի շարժընթացը՝ ըստ ապրանքախմբերի³

Հարկ է ընդգծել, որ ծխախոտի արտահանման ծավալների զգալի աճը պայմանավորված է Իրաքում⁴, Ռուսաստանում⁵, Իրանում¹ հայկական ծխա-

¹ St'u Trading Economics: Armenia Exports, <https://tradingeconomics.com/armenia/exports>

² St'u Trading Economics: Armenia Exports by category, <https://tradingeconomics.com/armenia/exports-by-category>

³ St'u Trading Economics: Armenia Exports by category, <https://tradingeconomics.com/armenia/exports-by-category>

⁴ St'u Trading Economics: Armenia Exports of tobacco and manufactures tobacco substitutes to Iraq <https://tradingeconomics.com/armenia/exports/iraq/tobacco-manufactures-tobacco-substitutes>

⁵ St'u Trading Economics: Armenia Exports of tobacco and manufactures tobacco substitutes to Russia

խոտի պահանջարկի կտրուկ աճով: 2017 թվականից այս ապրանքի արտահանումը Իրաք, 2021-ի համեմատությամբ, աճել է մոտավորապես 44%-ով, Ռուսաստան՝ 311%-ով (հասնելով 14 միլիոնի), Իրան՝ 300%-ով (165 միլիոնի):



Գծապատկեր 4. ՀՀ-ից ծխախոտի արտահանում գործընկեր երկրների կողմից, հազ. ԱՄՆ դոլար, 2013–2021 թթ.²

Որքան էլ զարմանալի է, իրականում ՀՀ-ն կոշիկ և տեքստիլ ամենաշատն արտահանում է Ռուսաստան, Իտալիա և Գերմանիա (աղյուսակ 1), 2017 թվականից ի վեր այն ունի կայուն աճի տեմպեր դեպի վերոնշյալ երկրներ: Ամենազգալի աճը գրանցվել է 2018 թ., ինչը պայմանավորված է եղել դեպի Ռուսաստան արտահանման կտրուկ աճով: Ռուսաստանում այդ ժամանակահատվածում էմբարգոյի քաղաքականությունը ռուսական որոշ ապրանքային շուկաներում հանգեցրել է մատակարարումների պակասի:

Աղյուսակ 1

Տեքստիլի և կոշիկի արտահանման հիմնական ուղղությունները³ (2020)

Գործընկեր երկրի անվանումը	Արտահանում (ԱՄՆ դոլար)
Ռուսաստանի Դաշնություն	67,201,400
Իտալիա	35,617,700
Գերմանիա	21,286,430
Սլովակիայի Հանրապետություն	4,049,070
Նիդեռլանդներ	1,521,780
Թուրքմենստան	749,160
Ֆրանսիա	685,240


2019-2020 թթ. արտահանման ծավալների անկումը պայմանավորված էր կորոնավիրուսային համավարակով և պատերազմով: Կարելի է ասել, որ արտարժույթի փոխարժեքը գրեթե չի ազդել տեքստիլի և կոշիկի արտահանման ներուժի վրա, որովհետև, անկախ 2018-2020 թթ. կայուն փոխարժեքի առկայությունից, արտահանման ծավալների անկում է գրանցվել, իսկ 2021-ին, հակառակ դրամի արժեզրկմանը (առավելագույն արժեք գրանցվել է 2021 թ.՝ 528 ՀՀ դրամ), արտահանումն աճել է:

<https://tradingeconomics.com/armenia/exports/russia/tobacco-manufactures-tobacco-substitutes>

¹ St'u Trading Economics: Armenia Exports of tobacco and manufactures tobacco substitutes to Iran <https://tradingeconomics.com/armenia/exports/iran/tobacco-manufactures-tobacco-substitutes>

² St'u ՀՀ ՊԵԿ, <https://www.petekamutner.am/Content.aspx?itn=csCIExportStatistics>

³ https://wits.worldbank.org/CountryProfile/en/Country/ARM/Year/2018/TradeFlow/EXPIMP/Partner/all/Product/50-63_TextCloth



Գծապատկեր 5. Տեքստիլի և կոշիկի արտադրողները՝ ըստ տարիների, մին ԱՄՆ դոլար

ԵԱՏՄ երկրների հետ մրցունակ փոխարժեքի պահպանումը: 2015 թվականից ՀՀ-ն ԵԱՏՄ անդամ է, և կարելի է եզրակացնել, որ Ռուսաստանի, Ղազախստանի, Բելառուսի, Ղրղզստանի շուկաներում տնտեսության առևտրային հատվածի մրցունակությունն առաջնային նշանակություն ունի Հայաստանի Հանրապետության համար: Երկրի արտարժույթի փոխարժեքն էական ազդեցություն ունի արտաքին առևտրի մրցունակության վրա, և այս առումով կարևորվում է գերարժևորված արժույթի նկատմամբ մրցունակ փոխարժեքի պահպանումը:

Աղյուսակ 2

ԵԱՏՄ երկրների ազգային արժույթների անվանական փոխարժեքների շարժընթացը¹

Երկիր/Տարի	2014	2015	2016	2017	2018	2019	2020	2021	2022
Հայաստան	416	478	480	483	483	480	491	504	436
Ղազախստան	179	222	342	326	345	382	417	425	484
Ղրղզստան	54	64	70	69	69	69	69	78	83
Բելառուս	1.02	1.59	1.99	1.93	2.04	2.08	2.60	2.56	2.75
Ռուսաստան	38	61	67	58	63	64	74	74	60

Այս տեսանկյունից կարևոր է ԵԱՏՄ անդամ երկրների ինչպես անվանական, այնպես էլ իրական փոխարժեքների շարժընթացի ուսումնասիրումը 2014-2022 թթ. կտրվածքով:

Ինչպես հետևում է աղյուսակ 2-ից, ԵԱՏՄ-ում Բելառուսի և Ղազախստանի ազգային արժույթների անվանական փոխարժեքները ռուսական ռուբլու համեմատ արժեզրկվել են ավելի բարձր տեմպերով. 2018 թ. Ղրղզստանի և ՀՀ-ի դեպքում հակառակն է նկատվում: Ավելին, հայկական դրամը համեմատաբար կայուն է մնացել մյուս երկրների ազգային արժույթների համեմատ:

Թեև ԵԱՏՄ անդամ մյուս երկրներում արժեզրկման գործընթացն ուղեկցվել է գնաճի ավելի բարձր տեմպերով, քան Հայաստանի Հանրապետությունում, այնուհանդերձ, չի հանգեցրել արժեզրկման արդյունքների չեղարացման, ինչի մասին վկայում է իրական արդյունավետ փոխարժեքի շարժընթացը:

¹ https://www.google.com/finance/quote/AMD-USD?sa=X&ved=2ahUKewiqppaytLb9AhW9_7sIHauWBWEQmY0JegQIBhAd

Իրական փոխարժեքը շատ կարևոր է երկրի արտաքին մրցունակության համար: Հաշվի առնելով Ղազախստանի, Բելառուսի և Ռուսաստանի տնտեսության իրական փոխարժեքի արժեզրկումը, պայմանավորված ռուս-ուկրաինական պատերազմով, Ռուսաստանի հանդեպ սահմանված պատժամիջոցներով, որոնք ուղեկցվում են Հայաստանում իրական արժևորմամբ, ՀՀ տնտեսության առևտրային հատվածը որոշակիորեն կորցրել է իր մրցունակությունը ԵԱՏՄ-ում, մասնավորապես՝ ռուսական շուկայում: Այս ամենը զգալիորեն սահմանափակում է Հայաստանի արտահանման ներուժը ԵԱՏՄ շուկաներում: Մինչդեռ, ԵԱՏՄ-ին անդամակցությունը զգալիորեն մեծացնում է ՀՀ-ի արտահանման հնարավորությունները՝ հատկապես հաշվի առնելով Ռուսաստանի տնտեսության չափը:

Եզրակացություն: ՀՀ դրամի գերաժևորումը, ընդհանուր առմամբ, արտահանման ծավալների աճի է հանգեցրել մասնավորապես այնպիսի ոլորտում, ինչպիսին ծխախոտի արտահանումն է: Մի շարք ոլորտների արտահանման ծավալները, ինչպիսիք են տեքստիլի և կոշիկեղենի արտահանումը, կախված չեն եղել արտարժույթային փոփոխություններից: Այնուամենայնիվ, ԵԱՏՄ շուկայում Հայաստանի մրցունակությունը որոշակիորեն վտանգված է միության անդամ մյուս երկրներում, առաջին հերթին՝ Ռուսաստանում՝ ռուբլու արժեզրկման պատճառով: Հետևաբար, Հայաստանի Հանրապետության համար կարևոր է պահպանել մրցունակ փոխարժեքը՝ առավելագույնի հասցնելու իր արտահանման ներուժը, հատկապես՝ ԵԱՏՄ շուկայում: Բացի դրանից, կարևոր է հաշվի առնել այնպիսի գործոններ, ինչպիսիք են գնաճի տեմպերը և արտաքին տնտեսական իրադարձությունները՝ ճշգրիտ գնահատելու համար փոխարժեքի տատանումների ազդեցությունը Հայաստանի Հանրապետության արտահանման ներուժի վրա: ՀՀ Կառավարությունը և Կենտրոնական բանկը պետք է շարունակեն վերահսկել և կառավարել փոխարժեքը՝ միջազգային շուկայում կայուն աճ և մրցունակություն ապահովելու համար:

Եզրակացությունից բխող առաջարկություններ.

- Հայաստանի Հանրապետությունը պետք է հրաժարվի փոխարժեքի կայունության ապահովման ոչ շուկայական մեխանիզմներից: Կենտրոնական բանկը պետք է անհապաղ անցնի ազատ լողացող փոխարժեքի և չմիջամտողական քաղաքականության, ինչը զգալիորեն կընդլայնի հայկական պատրաստի արտադրանքի ներկայությունը արտաքին շուկաներում, հատկապես՝ Ռուսաստանի Դաշնությունում:
- Տարածաշրջանային առումով, այս պահի դրությամբ, հայ արտադրողները հնարավորություն ունեն ընդլայնելու իրենց դիրքերը Իրանի շուկայում «սննդամթերք և խմիչքներ», «սպառողական ապրանքներ» ապրանքախմբերում, ինչն իրականացվել է ծխախոտի դեպքում: Ռուսաստանի շուկան ևս գրավիչ է՝ ելնելով ռուս-ուկրաինական պատերազմից, այնուամենայնիվ, ռուբլու արժեզրկումը հետագայում կարող է արտահանման ծավալների կրճատման առիթ դառնալ:
- ՀՀ-ն պետք է ընդլայնի իր արտահանման հոսքերը դեպի ԵՄ երկրներ և ԱՄՆ՝ հաշվի առնելով դրամի արժևորման նման տեմպերը: Այնուամենայնիվ, պետք է հաշվի առնել նաև ԵՄ երկրների կողմից սահմանված ապրանքային չափանիշները՝ ֆինանսական մեծ ռիսկերից խուսափելու համար:

Օգտագործված գրականության ցանկ

1. Aizenman J., Lee J., Real exchange rate, mercantilism and the learning by doing externality. Pacific Economic Review, 2010.
2. Balassa B., Incentive policies and export performance in sub-Saharan Africa. World Development, 1990, 391 pages.
3. Bhala S., Economic development and the role of currency undervaluation. Cato Journal. 2008, 340 pages.
4. Compass center Armenia: The economic situation in Armenia: Opportunities and challenges in 2017. <https://library.fes.de/pdf-files/bueros/georgien/13248.pdf>
5. Dzanan H., Masih M., Does currency depreciation necessarily result in positive trade balance? New evidence from Norway. Munich Personal RePEc Archive. MPRA Paper. 2017.
6. Eichengreen B., The real exchange rate and economic growth. Commission on Growth and Development Working Paper, 2018.
7. Feldstein M. Europe's Monetary Union: The case against EMU. The Economist. June 13, 1992.
8. Grigor Hayrapetyan: Regional and international trade of Armenia: perspectives and potential, <http://www.aea.am/files/papers/w1103.pdf>
9. Leslie Kramer: How Importing and Exporting Impacts the Economy, 2022.
10. McLeod D., Mileva E., Real exchange rates and growth surges. Fordham University. Department of Economics. Discussion Paper, 2011.
11. Rodrik D. Growth strategies. NBER Working Paper, 2003, <https://www.nber.org/papers/w10050.pdf>
12. Rose A. K., Exchange rate regimes in the modern era: Fixed, floating and flaky. Journal of Economic Literature.
13. Safuan S., Exchange rate volatility and export volume: The case of Indonesia and its main trading partners. European Research Studies Journal. 2017, 13 pages.
14. Sandoyan E., Voskanyan M., Galstyan A., Impact channels of currency regulation on economic growth: The case of Armenia. Journal Global Policy and Governance.

АСМИК ГАМБАРЯН

Менеджмент,
бакалавриат, 4-й курс

ВЛИЯНИЕ КУРСА НАЦИОНАЛЬНОЙ ВАЛЮТЫ НА ЭКСПОРТНЫЙ ПОТЕНЦИАЛ

Ключевые слова: курс национальной валюты, экспортный потенциал, политика валютного регулирования, экономический потенциал

Влияние иностранной валюты на экспортный потенциал страны всегда находится в центре внимания экономистов и является предметом ряда научных исследований и дискуссий. В данном исследовании анализируется влияние обменного курса национальной валюты (драм) на экспортный потенциал Республики Армения, выявляются объемы экспорта каких групп товаров в основном изменились в результате завышения курса армянского драма и рассматривается выбор политики валютного регулирования с целью стабилизации ситуации со стороны банка.

HASMIK GHAMBARYAN

4th year Bachelor, Department of Management

THE EFFECT OF NATIONAL CURRENCY EXCHANGE RATE ON THE EXPORT POTENTIAL

Keywords: national currency exchange rate, export potential, currency regulation policy, economic potential

The influence of foreign currency on the country's export potential is always in the center of attention of economists and it has been the subject of several scientific studies and discussions. In this study, the impact of the Republic of Armenia's national currency (Dram) exchange rate on the Republic's export potential has been examined. We have determined which product groups' export volumes were primarily affected by the overvaluation of the Armenian dram, and the choice of currency regulation policy has been discussed in order to stabilize the situation by the bank.

ԳՈՇԱՐ ԴՈՂՈՍՅԱՆ

Վիճակագրություն, բաղալարաբանություն,
3-րդ կուրս

ՀՀ ԴՐԱՄԱԿԱՆ ՓՈԽԱՆՑՈՒՄՆԵՐԻ ՇԱՐԺԸՆԹԱՅԻ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

Հիմնաբառեր. դրամական փոխանցում, ներհոսք, արտահոսք, զույր ներհոսք

Դրամական փոխանցումների մակարդակը տարբերակների փոփոխվում է՝ կախված այնպիսի գործոններից, ինչպիսիք են տնտեսական պայմանները, զբաղվածության հնարավորությունները և միգրացիայի ձևերը: Ընդ որում, վերջին տարիներին դրամական փոխանցումների հոսքի ծավալը, հատկապես դեպի զարգացող երկրներ, հասել է ռեկորդային մակարդակի, ինչն էլ այս թեման դարձրել է արդիական:

Սույն հոդվածում, կիրառելով վիճակագրական մեթոդներ, ներկայացվում են ՀՀ դրամական փոխանցումների հոսքի փոփոխությունները և այդ փոփոխություններն առաջացրած հավանական պատճառները:

Ներածություն: Օրեցօր գլոբալացվող աշխարհում մարդկանց տեղաշարժը դարձել է դարաշրջանի որոշիչ հատկանիշը: Անկախ պատճառից (նոր տնտեսական հնարավորություններ, կրթություն, հարազատների հետ վերամիավորման ցանկություն)՝ միգրացիան դարձել է համաշխարհային նշանակալի երևույթ: Մշակույթների, գաղափարների և տաղանդների փոխանակման համապատկերին ի հայտ է գալիս մեկ այլ կարևոր ուղղություն՝ դրամական փոխանցումները:

Դրամական փոխանցումները՝ միգրանտների կողմից իրենց հայրենի երկրներ փոխանցվող միջոցները, վերածվել են տնտեսությունները ձևավորող և աշխարհագրական բացերը հաղթահարող ահռելի ուժ: Դրամական փոխանցումներն ամբողջ աշխարհում ազդում են տնտեսական կայունու-